



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/19**

17.01.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ **Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ **Կենտրոն**), քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (դատավոր՝ Ս. Մարաբյան) (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան կամ դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատարանում քննվող թիվ ՎԴ/0011/15/18 քրեական գործով կիրառման ենթակա վերոնշյալ իրավական նորմերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ դատարանի դիրքորոշման՝ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքը տարածվում է նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կատարման փուլում ծագող հարցերի վրա, ինչը նշանակում է, որ դատավճիռների կատարման փուլում ևս անձն իրավունք ունի դիմելու դատարան իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու կամ կանխելու հարցերով, իսկ օրենսդիրն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան պետք է հստակ սահմանի այդ բոլորքները քննելու իրավասու դատարանը (վարչական, թե ընդհանուր իրավասության) և դատավարական անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը, որպեսզի անձի իրավունքը լինի իրական, այլ ոչ թե պատրանքային:

Մինչդեռ քննարկվող դատական գործով քննության առարկա հարցի (ՔԿՀ պետի որոշումների օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ բողոքի) առնչությամբ վերոնշյալ երկու տեսանկյունից էլ ՀՀ իրավական համակարգում առկա են խնդիրներ, որը վտանգում է անձի արդարադատության մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացման հնարավորությունը:

Ըստ դատարանի՝ ՀՀ տարբեր իրավական ակտերի վերլուծությունից պարզ չի դառնում, թե (1) որ դատարանը պետք է քննության առարկա դարձնի ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դեմ բողոքները՝ վարչական, թե՛ ընդհանուր իրավասության, (2) եթե ընդհանուր իրավասության դատարանը՝ ինչպես ընդունված է դատական պրակտիկայում, ապա՝ ինչ ժամկետներում, ինչ կարգով, ինչ լիազորություն ունի կամ պետք է ունենա դատարանը քննարկվող որոշումների և գործողությունների դեմ բողոքների վերաբերյալ որոշում կայացնելուց:

Մեջբերելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը և դրա կիրառման պրակտիկան՝ դատարանը նշել է, որ նման բողոքները ընդդատյա չեն վարչական դատարանին: Միաժամանակ, դատարանի դիրքորոշմամբ խնդրո առարկա հարցը չի մտնում նաև ընդհանուր իրավասության դատարանների առարկայական ընդդատության մեջ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում, որը նվիրված է դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերի լուծմանը, ինչպես նաև 41-րդ և 44-րդ հոդվածներում, որոնք սահմանում են դատարանի լիազորությունները և դատարանին ընդդատյա գործերը՝ հստակ սահմանված են այն հարցերի շրջանակը, որոնք հանդիսանում են քրեական գործեր քննող դատարանների կողմից լուծման ենթակա և դրանցում խոսք չկա ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների վերաբերյալ քննության մասին:

Քրեադատավարական օրենսդրությունը դատական ակտերի կատարման փուլը կանոնակարգող Օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերով կարգավորում է բացառապես դատական իշխանության գործունեությունն այն սահմաններում, որոնք վերաբերում են բացառապես Օրենսգրքի 360-րդ հոդվածին համապատասխան դատավճռում լուծված հարցերին:

Դատարանը գտնում է, որ պատժի կատարման տեսանկյունից՝ խոսքը վերաբերում բացառապես դատավճռով մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակված և լուծված պատժին, ինչը նշանակում է, որ գործող քրեական դատավարության օրենսդրությամբ պատժի կատարման հետ կապված բացառապես այն հարցերի առնչությամբ կարող է քրեադատավարական կարգով հարց բարձրացվել և լուծվել, եթե դրա նյութաիրավական հիմքը քրեական օրենսդրությունն է: Գործող քրեադատավարական օրենսդրությունը չի կարգավորում այնպիսի իրավահարաբերություններ, որոնք թեև առաջանում են մեղադրական դատավճռի կատարման հետ կապված, սակայն չեն վերաբերում այդ դատավճռում լուծված հարցերին, օրինակ՝ ՔԿՀ պետի կողմից դատապարտյալին տույժի ենթարկելու իրավաչափությունը ստուգելը, քանի որ դրա նյութաիրավական հիմքը քրեական օրենսդրությունը չէ, այլ՝ քրեակատարողական օրենսդրությունն է, իսկ դատավարական իմաստով այն չի վերաբերում դատավճռի և դրանով նշանակված պատժին, հետևաբար

այն դուրս է քրեադատավարական հարաբերություններից: Ընդ որում՝ քննարկվող հարցը պատշաճ կարգավորում չի ստացել նաև ՀՀ դատական օրենսգրքում:

Արդյունքում ստացվում է, որ ըստ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների՝ անձն ունի իր խախտված իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, իսկ ՀՀ վարչական դատավարության և Դատական օրենսգրքերը սահմանում են, որ պատժի կատարման հետ կապված հարցերը պետք է լուծեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում որևէ կարգավորում դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դեմ բողոքների քննության վերաբերյալ և դրանով իսկ ոչ միայն վտանգում ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքի իրացման հնարավորությունը, այլև հակասության մեջ մտնում ՀՀ Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածներով ամրագրված սկզբունքների հետ:

Վերոգրյալից ելնելով՝ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 79-րդ, 75-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի հունվարի 22-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող քրեադատավարական իրավակարգավորումների բովանդակությունը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հետևյալն է.

Հոդված 41. Դատարանի լիազորությունները

2. Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝
6) դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծելը.

Հոդված 44. Առաջին ատյանի դատարաններին ընդդատյա գործերը

Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:

«Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում՝ 427-438-րդ հոդվածներում, կարգավորված են դատական որոշումների կատարման հետ կապված հարցերը, մասնավորապես.

- Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը և դրանց ի կատար ածումը (հոդված 427),

- Դատարանի որոշումը կատարման հանձնելու կարգադրությունը (հոդված 428),
- Դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովումը (հոդված 429),
- Դատական որոշման վերաբերյալ կասկածների և որոշումների անհստակությունների լուծումը (հոդված 430),
- Դատական որոշման կատարման հետաձգումը (հոդված 431),
- Տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելը (հոդված 431.1),
- Պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով (հոդված 432),
- Այն դատապարտյալին պատժից ազատելը, որի նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգված է, ինչպես նաև դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելը (հոդված 433),
- Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը (հոդված 434),
- Դատապարտյալի հետախուզումը (հոդված 434.1),
- Ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պատիժը կրելու ժամանակ պահելու պայմանները փոխելը (հոդված 435) **(հոդվածն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-61-Ն),**
- Բուժական հիմնարկում գտնվելու ժամանակի հաշվանցումը պատժի ժամկետի մեջ (հոդված 436),
- Դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծող դատարանները (հոդված 437),
- Դատական որոշումների կատարման հետ կապված հարցերի լուծման կարգը (հոդված 438):

Վերը նշված քրեադատավարական կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում որևէ կերպ նախատեսված չէ ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման հնարավորությունն ու այդ որոշումների և գործողությունների օրինականության և հիմնավորվածության՝ հետագա դատական վերահսկողության կարգով վերանայման որևէ ընթացակարգ: Վերը թվարկված իրավադրույթները հստակ և սպառիչ կերպով սահմանում են ընդհանուր իրավասության դատարանի առարկայական ընդդատության սահմանները, որի մեջ ՔԿՀ որոշումների և գործողությունների օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը չի մտնում:

Քննարկվող խնդիրը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել նաև **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ հոդվածի շրջանակներում, որը մասնավորապես սահմանում է.**

2. Դատապարտյալն իրավունք ունի դիմել որոշում կայացրած դատարան՝ դատական որոշման կատարումը հետաձգելու, ծանր հիվանդության կամ հետաձգման ժամկետը լրանալու հետևանքով պատիժը կրելուց ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ հարցերի մասին հայտարարություններով:

Ակնհայտ է, որ նշված դրույթը դատական որոշումը ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովմանը վերաբերող հարցերի շարքին է դասում՝

ա) դատական որոշման կատարումը հետաձգելը,
բ) ծանր հիվանդության կամ հետաձգման ժամկետը լրանալու հետևանքով պատիժը կրելուց ազատելը

գ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ հարցերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, բացի վերևում թվարկվածներից, որևէ այլ հարցերի մասին դատարանում (ընդհանուր իրավասության) հայտարարություններով հանդես գալու, այդ թվում՝ ՔԿՀ պետի որոշումների և գործողությունները դատապարտյալի կողմից բողոքարկելու հնարավորություն չի նախատեսում:

Հաշվի առնելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկները վարչական մարմիններ են ՀՀ վարչական օրենսդրության իմաստով, խնդրի լուծումը պետք է փորձել փնտրել վարչական և վարչադատավարական օրենսդրության իրավակարգավորումներում:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 18-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 18. Դատական վերահսկողությունը

1. Պատիժներ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմը դատարանին հայտնում է պատիժը կատարելու մասին:

2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ:

Այսպիսով, պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ դատապարտյալի բողոքները քննարկելու դեպքերն ու կարգը ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը թողել է օրենքի կարգավորմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 10. Գործերի առարկայական ընդդատությունը

1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի

ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

Ակնհայտ է, որ օրենսդիրը գնացել է քննարկվող խնդիրը վարչական դատարանների առարկայական ընդդատությունից բացառելու ճանապարհով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանելով, որ **պատժի կատարման հետ կապված գործերը վարչական դատարանին ընդդատյա չեն:**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

2. Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերը, մինչդարական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերը քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Այսինքն՝ ՀՀ դատական օրենսգրքի նշված հոդածից հետևում է, որ այն ընդհանուր իրավասության դատարանների ընդդատությանն է թողել *պատժի կատարման հետ կապված **օրենքով նախատեսված գործերը:*** Թվում է, թե նշված իրավակարգավորմամբ քննարկվող խնդիրն ստացել է իր լուծումը, սակայն որևէ օրենքով, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես արդեն նշել ենք, դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի գործողությունների և որոշումների դատական բողոքարկման իրավունքը և դրա իրականացման ընթացակարգը նախատեսված չէ:

Այսպիսով, ստացվում է, որ ՔԿՀ պետի գործողությունների և որոշումների դատական բողոքարկման իրավակարգավորումը իրավական որոշակիության տեսանկյունից բավարար կարգավորված չէ, ինչը կարող է խնդիրներ հարուցել անձի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման հարցում:

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա

չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին՝** որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը³:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. **«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե**

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

³ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»⁴:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»⁵:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամարելելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն

⁴ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

⁵ Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»⁶:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից):

Կամ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի

⁶ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, ապա այն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:⁷

03.05.2016թ. թիվ ՍԴՈ-1270 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է.

«7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխատեսելի, մատչելի:

⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Չնայած քննարկվող խնդրի ոչ լիարժեք կարգավորումը իրավական որոշակիության և անձի դատական պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից խնդրահարույց է, այնուամենայնիվ, իրավակարգավորման ոչ լիարժեքությունն անհրաժեշտ է դիտարկել և գնահատել իրավունքի բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումների համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով **իրավունքի բացի** հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համադրությամբ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2014թ. ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշման մեջ նշել է. «...Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի և իրավական եզրույթների սահմանումների օրենսդրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում

արձանագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող փարրի բացակայության կամ այդ փարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը...»:

Սահմանադրական դատարանը 14 դեկտեմբերի 2012թ. թիվ ՍԴՈ-1061 որոշմամբ գտել է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված և համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող խնդիրը, այն է, ԲԿՀ պետի գործողությունների և որոշումների օրինականության և հիմնավորվածության դատական վերահսկողության իրավակարգավորումը լիովին բացակայում է: Մասնավորապես, **սահմանված չեն նշված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ժամկետները և դրանք քննության ընթացակարգը, այդ գործողությունների և որոշումների քննարկման արդյունքում դատարանի լիազորությունների շրջանակը, քննարկվող խնդրի առնչությամբ դատարանի կողմից կայացվող որոշումների վերադաս վերանայման իրավունքը և դրա իրականացման ընթացակարգը:** Ուստի, այս պարագայում, կարծում ենք, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Առկա հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ այն հանգամանքով, որ օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չեն: Առկա վիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը» որոշելու վերաբերյալ գործի վարույթն ամբողջությամբ ենթակա է կարճման առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան